

ցրուեալ էին Իսրայելացոցն ազգն. եթէ անդ լաց եւ հառաջ, աստ առաւելագոյն: Զի խամաց ի վեր իբրեւ տեղացիք լեալ, տուն եւ բնակուեթիւն չինեալ, այգի եւ բուրաստան, կրպակս, խանութս լի ապրանօք եւ ընչիւք. հարուստք եւ փարթամք՝ տնովք եւ տեղօք, որդովք եւ դստերօք, զարմօք եւ զաւակօք եւ ամենայն գոյիւք, նաեւ զդստերս տվեալ ոմանց եւ այլոց զգուստրն առեալ որդոց եւ եղբարց եւ այսպէս կապակցեալ եւ բարեկամացեալ ի սէրն միմեանց եւ յընտելացեալ եւ ընտանացեալ:

Ապա պօստանձի պաշին եւ մեծ վաղիրն զայմախան հրամայեցին ամէն փողոցէ կոչել զիմամնին եւ զիբիցնին, եւ սպառնալեօք պատվիրեցին որ մինչ Ի օր մարդ չի մնայ կամ չթագչի ուրէք՝ ոչ հայ, ոչ տաճիկ, ոչ ճհուտ, ոչ հոռոմ, ոչ այլ ոք, միայն տեղացիք: Եւ ելեալ զինուորքն սարայու, փաշայէն, սուպաշուն եւ զատիէն՝ Էասախչիք, հասասնի եւ ենկիչարիք, շրջէին ի բոլոր քաղաքն, ի փողոցս եւ ի հրապարակս, ի ծածուկ տեղիս, ի խաներն եւ ի քարվանսարայս, նաեւ յեկեղեցիս եւ ի մէջիթս. եւ զորս գտանէին ի տան՝ ըմբռնէին, իբրեւ զմահապարտ եւ զչարագործ չարչարէին, հարկանէին եւ տանէին առ վէղիրն: Անդ էր տեսանել զլաց եւ զազազակ, զճիչ եւ զկական, զհառաջ եւ զկսկիծ. ո՛հ մեծի աղէտիս եւ աւա՛ղ տարակուսանացս. որպէս գառն կսկիծ եւ նեղու-